ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի ընդլայնված նիստի

06 նոյեմբերի 2017թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Հ. Ս. Գասպարյան

úð²Î²ð¶

1. 2017-18թթ. ուս. տարվա I կիսամյակի և I ընթացիկ քննությունների արդյունքների ամփոփում:

/զեկ. Մ. Ա. Զաքարյան/

2. Տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործման վիճակի քննարկում:

/½»Ï. Ա. Ս. ՍիմոնÛ³Ý/

3. Այլ հարցեր:

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկան, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց 2017-18թթ. ուս. տարվա I կիսամյակի I ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքները, որը կցվում է արձանագրության տեքստին:

Այնուհետև զեկուցողը տվեց ընդհանուր հանձնարարական ամբիոններին և դասավանդող դասախոսներին, որ նախապատրաստվեն երկրորդ ընթացիկ քննություններին և ստուգումներին ապահովելու բարձր արդյունք:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Մ. Ս. Աթոյանը և Ա. Ս. Սիմոնյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Հանձնարարել ամբիոններին հատուկ ուշադրություն դարձնել տեսական և գործնական նյութին, երկրորդ ընթացիկ քննություններին և ստուգումներին բարձր արդյունք ապահովելու համար:

1. Հանձնարարել ամբիոններին, որ երկրորդ ընթացիկ քննությունների հարցաշարերը ժամանակին տրվեն ուսանողներին:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչի տեղակալ, դոցենտ Ա. Ս. Սիմոնյանը: Նա ներկայացրեց տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված-արդյունավետ օգտագործման վիճակը ֆակուլտետում.

- ՈՒանողներին ըստ մասնագիտությունների ցուցաբերվում է խորհրդատվական աջակցություն:
- Ապահովվում է նաև ծրագրային և տեխնիկական անհրաժեշտությունը
- Լաբորատորիայում գործում է նաև ներքին ցանց և անվճար ինտերնետ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա. Ս. Սիմոնյանը, Մ. Ս. Աթոյանը: Նրանք կարևորեցին համակարգչային մասնագիտական լաբորատորիաների դերը ֆակուլտետի տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված-արդյունավետ օգտագործման գործում:

Օրակարգի երրորդ հարցի մասին ֆակուլտետի գիտխորհրդի նախագահը հանդես եկավ ներֆակուլտետային ուսումնական գործընթացի վերաբերյալ ընդհանուր հանձնարարականներով:

ՆԱԽԱԳԱՀ	**Մ. Ա.ԶԱՔԱՐՅԱՆ**
ՔԱՐՏՈՒՂԱՐ	**Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ**